

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՐԱՉՅԱ ԱՃԱՌՑԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՀԱԿՈՔՅԱՆ ԼԻԼԻԹ ՌԱԶՄԻԿԻ

**ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑՈՒ
«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿԻ ԼԵԶՈՒՆ**

**Ժ.02.01 – «Հայոց լեզու» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2022

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Աննա Հենրիկի Աբաջյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լալիկ Մնացականի Խաչատրյան

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Գայանե Մելիսի Մխիթարյան

Առաջատար կազմակերպություն՝ Վանաձորի Հովիթ Թումանյանի անվան պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2022 թ. սեպտեմբերի 12-ին՝ ժամը 15⁰⁰-ին, ՀՀ ԲՈԿ-ի՝ ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի հնաստիտուտում գործող Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդի նիստում (ք. Երևան 0015, Գրիգոր Լուսավորչի փ. 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ ՀրԹ Աճառյանի անվան լեզվի հնաստիտուտի գրադարանում:

Մեղմագիրն առաքված է 2022 թ. հունիսի 30-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ՝

Ն. Մ. Մխնոյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Յուրաքանչյուր ազգի մշակութային համապատկերը ամբողջացնելու տեսակետից խիստ անհրաժեշտ են անցյալի արժեքների վերհանումը, բազմակողմանի ուսումնասիրությունը և ճիշտ գնահատումը: Դա արդիական է նաև գիտության մեջ: Միջնադարյան պատմագրական երկերի համալիր ուսումնասիրության առումով մեծապես կարևորվում է դրանց լեզվաբանական վերլուծությունը:

Հայ միջնադարյան պատմագրական արձակում արժեքավոր տեղ ունի ԺԳ դարի պատմիչ, եկեղեցական, հասարակական գործիչ Կիրակոս Գանձակեցին: Ծավալած բուն գործունեության շնորհիվ Կիրակոս վարդապետ Գանձակեցին մեծ ճանաչում է ունեցել և հարգանք վայելել Հայաստանում, շատ հարցերում կարևոր դերակատարում հանդես բերել: Նրա մատենագրական վաստակը պատմագրական խոշոր աշխատանքն է՝ «Պատմութիւն Հայոց» երկը, որում պատմիչը հանդես է բերում խոր, բազմակողմանի գիտելիքներ:

Սույն ատենախոսությունը նվիրված է վերը նշված երկի լեզվական քննությանը: Միջին հայերենի գործածության ժամանակաշրջանում ապրած, բայց գրաբարով ստեղծագործած այս հեղինակի երկի լեզվական ուսումնասիրությունը նպաստում է 13-րդ դարում գրաբարի գիտական նկարագիրն առավել համապարփակ դարձնելուն:

21-րդ դարի առաջին երկու տասնամյակներում չափազանց կարևոր նշանակություն են ձեռք բերել հայոց լեզվի, հատկապես նրա տերմինաբանության մշակումն ու զարգացումը բուն հայկական հիմքի վրա: Այդ հարցը լուծելու համար անհրաժեշտություն է առաջանում ավելի հաճախ դիմելու մեր լեզվի զարգացման նախորդ փուլերին: Հենց դրա համար էլ գրաբարով ավանդված գրավոր հուշարձանները դառնում են լուրջ և համակողմանի ուսումնասիրության առարկա: Սույն ուսումնասիրության **արդիականությունը** պայմանավորված է դրանով:

Կ. Գանձակեցու երկի բառապաշարի ամբողջական ներկայացումը կարևորվում է նաև մեկ այլ հանգամանքով. պատմիչի երկում վկայված են շուրջ 6 տասնյակի հասնող մոնղոլական փոխառություններ, որոնք փոխատու լեզվում արդեն վերացել են: Փաստորեն Կ. Գանձակեցու երկի շնորհիվ այդ բառերը փրկվել են անդարձ կորստից և կարող են վերականգնվել նաև ժամանակակից մոնղոլերենում: Սույն ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև այդ բառաշերտի ուսումնասիրությամբ:

Սույն ատենախոսության **նպատակն** է ցույց տալ 13-րդ դարի պատմիչ Կ. Գանձակեցու «Պատմութիւն Հայոց» երկի լեզվաբանական-բանասիրական արժեքը, պատմագիտական կողմը և հատկապես Հայաստանում թաթար-մոնղոլական տիրապետության շրջանի հավաստի սկզբնաղբյուր լինելը: Գրված լինելով 13-րդ դարում՝ միջին հայերենի գործածության ժամանակահատվածում՝ երկը հիմնականում ներկայացնում է գրաբարի բառակազմական, քերականական համակարգերի առանձնահատկությունները, որոնց

վերլուծությունը ներկայացվող աշխատանքի հիմնական խնդիրն է: Այլ կերպ ասած՝ սույն ատենախոսության նպատակն է լեզվական համակողմանի քննության ենթարկել Կ. Գանձակեցու երկը՝ ուշադրության կենտրոնում ունենալով հետևյալ **խնդիրները**:

1. առանձնացնել բառապաշարի այն շերտերը, որոնք վկայված են երկում (գրաբարից ավանդված բառեր, հետգրաբարյան բառաշերտ),
2. արձանագրել բառապաշարային և քերականական այն իրողությունները, որոնք շեղվում են դասական հայերենի հայտնի չափանիշներից ու ձևերից,
3. դիտարկել հետագա փոփոխությունների միտումները ցույց տվող փաստերը,
4. ներկայացնել բառապաշարային և քերականական գուգաձևությունները,
5. ներկայացնել պատկերավորման համակարգի առանձնահատկությունները:

Սույն ուսումնասիրության փաստական նյութը 13-րդ դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցու գրական ժառանգությունն է՝ «Պատմութիւն Հայոց» երկը: Լայնորեն օգտագործել ենք Գանձակեցու երկի լեզվի ու ոճի մասին տեղեկություններ պարունակող գրեթե բոլոր հրապարակումները:

Վերը նշված խնդիրները իրագործելու համար կիրառվել են մի քանի **մեթոդներ**: Աշխատանքը գլխավորապես կատարվել է նկարագրական-վերլուծական մեթոդով: Մինևս ժամանակ կիրառվել են փաստերի համադրման համաժամանակյա և տարժամանակյա մեթոդները:

Տարժամանակյա մեթոդի կիրառմամբ փորձել ենք ներկայացնել լեզվական որոշ իրողությունների փոփոխությունների միտումները և ուղղությունները՝ որպես լեզվի պատմական զարգացման հետևանք:

Սույն ատենախոսության **գիտական նորություն** այն է, որ այս հետազոտությունը 13-րդ դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Հայոց» երկի ամբողջական, բազմաշերտ քննության առաջին փորձն է: Համակողմանի քննության ենք առել վերը նշված երկի բառագիտական, ձևաբանական, շարահյուսական յուրահատկությունները և արձանագրում ենք, որ 13-րդ դարում՝ միջին հայերենի գործածության ժամանակահատվածում, ստեղծվում է մի երկ, որում լեզվական բոլոր մակարդակների ձևերի մեջ գերիշխողը գրաբարյանն է:

13-րդ դարի հայ պատմագրության վառ ներկայացուցիչ Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Հայոց» երկում առկա լեզվական փաստերի քննությունն ու վերհանումը կարող են թե՛ **տեսական** և թե՛ **գործնական նշանակություն** ունենալ հայագիտության համար: Սույն ատենախոսության մեջ բերվող նյութը կարող է օգտակար լինել հայոց լեզվի պատմության, բառակազմության, բառապաշարի, քերականությանը վերաբերող հարցերով զբաղվողների համար:

Ատենախոսությունը քննարկվել է ԵՊՀ հայոց լեզվի պատմության ամբիոնում և երաշխավորվել հրապարակային պաշտպանության:

Ատենախոսության հիմնադրություններն արտացոլված են թեմայի վերաբերյալ տպագրված հոդվածներում:

Ատենախոսությունը բաղկացած է առաջաբանից, չորս գլխից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության ծավալը 133 էջ է:

Առաջաբանում խոսվում է թեմայի ընտրության և արդիականության մասին: Հետազոտության այս մասում ներկայացվում է 13-րդ դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցու կյանքին, գործունեությանը, նրա ապրած ժամանակաշրջանին վերաբերող համապարփակ և ընդգրկուն տեղեկատվություն¹: Ուշադրություն է դարձվում ոչ միայն պատմիչի ապրած ու ստեղծագործած, այլ նաև երկում ներկայացված պատմական ժամանակաշրջանի առանձնահատկություններին: Համառոտ ակնարկով ներկայացվում են նրա «Պատմութիւն Հայոց» երկի դերն ու կարևորությունը:

Համառոտ անդրադարձ է կատարվում նաև հարցի ուսումնասիրվածության աստիճանին: Հանգամանորեն ներկայացվում են «Պատմութիւն Հայոց» երկի բովանդակությունը, այն գրելու հիմնական դրոշմապատճառները:

Ատենախոսության առաջին գլխում՝ **«Պատմութիւն Հայոց» երկի բառապաշարը**, պատմիչի երկի բառային կազմի քննությունն է՝ ըստ հետևյալ խմբերի՝ ծագումնաբանական և ձևախմբաբանական: Այս գլուխը բաղկացած է երեք ենթագլխից: Առաջին գլխի առաջին ենթագլուխը՝ **«Պատմութիւն Հայոց» երկի բառապաշարի ծագումնաբանական խմբերը**, անդրադառնում է երկի բառային կազմի՝ գրաբարից ավանդված բառերին և հետգրաբարյան բառաշերտին, դրանց վերաբերյալ տարբեր լեզվաբանների տեսակետներին:

Գանձակեցու «Պատմութիւն Հայոց» երկի բառապաշարը ծագումնաբանական դրսևորումների դիտակետում ներկայանում է հետևյալ շերտերով՝ գրաբարից ավանդված բառեր և հետգրաբարյան բառաշերտ:

Գրեթե բոլոր պատմիչները տարբեր հաճախականությամբ գործածել են հայոց գրական լեզվի թե՛ բնիկ հայերեն և թե՛ փոխառյալ բառեր: Գանձակեցին բացառություն չէ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պատմիչի երկում կան թե՛ գրաբարյան և թե՛ միջինհայերենյան բառեր, նրա երկի բառապաշարը ներկայացվում է երկու բաղադրիչով՝

1. գրաբարից ավանդված բառեր,
2. հետգրաբարյան բառաշերտ:

5-11-րդ դարերում վկայված և մեր ուսումնասիրած պատմիչի երկում արձանագրված բառերը սույն ատենախոսության մեջ ներկայացված են երկու խմբով՝ բնիկ հայերեն բառեր և փոխառություններ:

¹ Առաքելյան Վ., Կիրակոս Գանձակեցի, «Պատմաբանասիրական հանդես», 1972, N 1 (56), էջ 52:

Հետգրաբարյան բառաշերտում ներկայացված են միջին հայերենի գործածության ժամանակաշրջանում այլ լեզուներից փոխառված այն բառերը, որոնք մուտք են գործել միջին հայերենի բառապաշար սկսած 12-րդ դարից:

Պատմիչի երկում վկայված են թե՛ գրաբարյան և թե՛ հետգրաբարյան շրջանում կատարված փոխառություններ: Հատուկ ուշադրության են արժանացել մոնղոլերենից հայերենին անցած և հայերենի շնորհիվ պահպանված բառերը:

Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Հայոց» երկից տեղեկանում ենք, որ 13-րդ դարում՝ Հայաստանում մոնղոլական տիրապետության շրջանում, մոնղոլերենից հայերենին են անցել 62 բառ, որոնք ընդգրկված են իմաստային ինը խմբում:

Նշանավոր մոնղոլագետ Գ. Սանժենը վերանայել է Գանձակեցու երկում բերված մոնղոլերեն բառերը և տեղ-տեղ սրբագրել՝ ելնելով մոնղոլերենի՝ 12-13-րդ դարերի արտասանությունից: Այնուամենայնիվ, նա շատ բարձր է գնահատել մեր պատմիչի երկը՝ ասելով. «Այն ամենը, ինչ Կիրակոսը հաղորդում է մոնղոլների մասին, անչափ կարևոր նշանակություն ունի մոնղոլագիտության համար և առաջին հերթին 13-րդ դարի մոնղոլական լեզվի պատմության տեսագծով²»:

Հ. Աճառյանը այդ բառերի ծագումնաբանական քննության ժամանակ հայտնաբերել է երկու շերտ՝ մոնղոլական և թյուրք-թաթարական³:

Ոմանք էլ, տարբերություն չդնելով հարազատ և գրչագրական աղավաղված ձևերի միջև և հենվելով վերջիններիս վրա, ընկնում են ծայրահեղությունների մեջ, «հայտնաբերում» այն, ինչը վկայված չէ⁴:

Սույն հետազոտության մեջ այդ բառացանկը ներկայացված է՝ ըստ Գանձակեցու դասավորության, Մ. Բաղդամյանի հետազոտության, Գ. Սանժենի ու Հ. Աճառյանի գիտական տառադարձության:

Գանձակեցու երկում վկայված մոնղոլական փոխառությունները, ընդգրկելով գործածական ընդարձակ ոլորտներ, գործածության լայն բնագավառներ, կազմում են իմաստային բազմազան խմբեր: Դրանց քանակի, տոկոսային հարաբերակցության առավել ընդգրկուն և համապարփակ պատկերը ներկայացված է աղյուսակ 1-ում:

² Մելիք-Օհանջանյան Կ., Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 2Է:

³ Տե՛ս Աճառյան Գ., Հայոց լեզվի պատմություն, մաս II, Եր., 1953, էջ 259:

⁴ Տե՛ս Բաղդամյան Ռ., Կիրակոս Գանձակեցու մոնղոլերեն բառացանկը, «Պատմաբանասիրական հանդես», հ. 1, Երևան, 1979, էջ 129:

Մոնիթորեն փոխառությունների իմաստային խմբերը		
	Քանակը	Տոկոսային հարաբերակցությունը
Կենդանիներ	17	27, 4
Մարմնի մասեր	9	14, 5
Ֆիզիկական աշխարհ	11	17, 7
Գերդաստան, ընտանեկան հարաբերություններ	10	16, 1
Կրոն, նախապաշարմունք	3	4, 8
Ռազմական գործ, զենքեր	3	4, 8
Պետական-վարչական կյանք, պաշտոն, տիրույթ	3	4, 8
Հարկատեսակներ	2	3, 2
Այլ բառեր	4	6, 4
Ընդամենը	62	100

Առաջին գլխի երկրորդ ենթագլխում՝ «Պատմություն Հայոց» երկի բառապաշարի ձևաիմաստային խմբերը», ներկայացված են Գանձակեցու երկում վկայված հոմանիշները, հականիշները, համանունները:

Պատմիչի երկում վկայված օրինակներում գերակշռում են գոյական հոմանիշներով գույզերը: Բերենք մի քանի օրինակ՝ «Սոքա սինք եկեղեցոյ եւ ամրափակ պարիսպս որդոց նորա, աշտանակք լուսատուք եւ ջահք բորբոքեալք» (29), «Նստի ի վերայ իշոյ եւ յաւանակի յօրինակ եկեղեցոյ իրէից եւ հեթանոսաց» (127), «Ո՛չ երբեք եղեալ է թագաւորացն մերոց: Հարցանէր եւ գալլ վարդապետսն, եւ նոքա ասացին նմա գայն, որ առ մեծագօր արքային Տրդատաւ վրանն եւ սեղանն, գոր շրջեցուցանէին յարքունական բանակին» (167):

Կան նաև բայական և ածականական հոմանիշների գույզեր, ինչպես՝ «Վերստին նորոզեցան եկեղեցիք, եւ պայծառացան դասք պաշտօնէից: Ծինեցան եւ նոր վանորայք եւ եկեղեցիք ...» (164): Իսկ զօրն թաթար դարձաւ բազում աւարաւ եւ խնդութեամբ յաշխարհն Աղուանից, ի կայս ձմերոցի իւրոյ, յարգաւանդ եւ ի բերրի դաշտն, որ կոչի Սուղան» (280): «Արարին եւ երգս խաչի եւ եկեղեցոյ, եւ այլ տօնից տերունականաց, եւ սրբոց ամենեցուն, ապաշխարութեան եւ ամենայն ննջեցելոց, պէսպէսս եւ զանազանս» (30):

Ինչպես երևում է վերը բերված օրինակներից, պատմիչի երկում վկայված հոմանիշ բառերը հիմնականում գործածված են հենց նույն նախադասության մեջ ու շատ դեպքերում միավորված են «և» շաղկապով:

Կան օրինակներ, որոնցում հոմանիշներից մեկը անվանական հարադրություն է, իսկ մյուսը արտահայտված է բառային մեկ միավորով, ինչպես՝ աշ-

խարհն Աղուանից-Աղուանք (193), Ասորուց երկիր-Ասորիք (224), եբրայական ազգ-եբրայեցի (97), Հայոց աշխարհ (68)-Հայք (75), աշխարհն Վրաց (237)-Վիրք (240) և այլն:

Ուսումնասիրվող երկում կան հոմանիշների օրինակներ, որոնցից մեկը բալական հարադրություն է, իսկ մյուսը՝ նրանից սերած համադրական բարդություն, ինչպես՝ **ասպատակ սփռեն-ասպատակեն (94), երկիր պագանել (232)-երկրպագել (233):**

Գանձակեցու երկում կան թե՛ նույնարմատ, թե՛ տարարմատ հականիշներ:

Ներկայացնենք Գանձակեցու երկում վկայված հականշային նույնարմատ այն գույգերից, որոնցում բաղադրիչներից մեկին ավելանում է ժխտական նախածանցը՝ **ապականացու-անապական (140), եղանելի-անեղանելի (140), չարչարելի-անչարչարելի (140), հուատացեալ-անհուատ (185), հարկելիք-անհարկելիք (339), անապուսելի-ապուսելիք (339), շարժուն և անշարժուն (353)** և այլն:

Ինչպես երևում է բերված օրինակներից, ուսումնասիրվող երկում վկայված նույնարմատ հականշային գույգերի օրինակները կազմված են ժխտական հականիշներ կազմելու համար գրաբարում չափազանց կենսունակ **ան-** նախածանցով:

Տարարմատ հականիշները իրար հակադրվում են բառիմաստի ներհակությամբ: Գանձակեցու երկում հանդիպում են տարարմատ հականշության մի շարք օրինակներ: Ներկայացնենք դրանցից մի քանիսը՝ **հին և նոր (27), հեղագեւոց-ժրացեւոց (28), տիւ և գիշեր (40), այրել-շիջուցանել (41), հակառակեալ-հնազանդեալ (47), աստուածային և մարդկային (123), մեծութիւն և փոքրկութիւն (123), առաւելութիւն և նուագութիւն (123), սեր-ատելութիւն (173), արս և կանայս (295), երկնաորք և երկրաորք (300)** և այլն:

Հարկ ենք համարում արձանագրել, որ պատմիչի երկում վկայված թե՛ նույնարմատ և թե՛ տարարմատ հականշային գույգերը հաճախ գործածվում են հենց նույն նախադասության մեջ:

Բերենք մի քանի օրինակ:

Ո՛չ **մեծութիւն** և ո՛չ **փոքրկութիւն**, ո՛չ **բարձրութիւն** և ո՛չ **խոնարհութիւն**, ո՛չ **առաւելութիւն** և ո՛չ **նուագութիւն**, այլ մի կարգ, մի պաշտօն, մի երկրպագութիւն համագոյ սուրբ երրորդութեան դաւանի, որով գոյացան յոչէից եղեալքս ամենայն, երկինք **երկնաորօքս** և երկիրս **երկրաորօքս**, **երեւելի** և **աներեւոյթ** արարածք՝ յառաջինն եղեալ արարչութեան (123): Լուսք յոմանց ի նոցանէ ասել, թէ Քրիստոս՝ մարմին համագոյակից մեզ, **թանձր**, **մահկանացու**, **չարչարելի**, **երկրային**, **ապականացու** և **եղանելի**, ո՛չ էառ ի կուսէն, այլ **անապական**, **անօսր**, **անչարչարելի**, և **անեղանելի**... (140):

Վերը նշված օրինակները վառ վկայությունն են այն բանի, որ հականշային գույգի՝ նույն նախադասության մեջ կիրառությունը չափազանց կարևորվում է ոճական տեսանկյունից. դա էլ ավելի ցայտուն է ընդգծում հակադրությունը և սաստկացնում իմաստը:

Գանձակեցու երկում վկայված համանունների նույն շարքի մեջ մտնող բառերը հիմնականում պատկանում են նույն խոսքի մասին: Ուսումնասիրվող երկում արձանագրված է համանունների մի գույգ, որի իմաստային երկու տարբերակն էլ փոխառություն են տարբեր լեզուներից:

Բրինձ¹ «հացագգիների ընտանիքին պատկանող բույս» (պարսկական փոխառություն) – **բրինձ**²–«իշխան, իշխանորդի» (ֆրանսիական փոխառություն): Նշված համանունային գույգի երկրորդ տարբերակը «պրինց» բառի արևմտահայերեն տարբերակն է:

Հմմտ. 1. «Պահանջէին հարիւր լիտր ցորեան, յիսուն լիտր գինի, երկու լիտր **բրինձ**, եւ ծնձատ, երեք տոպրակ...» (374):

2. «Թագաւորեցոյց գորդին իւր, զՀէթում, մանուկ տիօք, ածեալ զնա այր դստերն Լեւոնի փոխանակ որդւոյ **բրնձին**, գոր ըմբռնեալ եղին ի բանտի» (287):

Համանունության վերջին օրինակները բնորոշ են հենց միջին հայերենին:

Առաջին գլխի վերջին ենթազլխում՝ **«Բառակազմական օրինաչափությունները «Պատմութիւն Հայոց» երկում»**, անդրադառնում ենք բառակազմական այն օրինաչափություններին, որոնք բնորոշ են գրաբարին ու միջին հայերենին: Քննության են առնվել բառաբարդմամբ և ածանցմամբ կազմված բարդությունները:

Աշխատանքի երկրորդ գլուխը՝ **«Պատմութիւն Հայոց» երկի ձևաբանական առանձնահատկությունները**, բաղկացած է չորս ենթազլխից: Այս գլխի առաջին ենթազլուխը՝ **«Գրաբարյան և միջինհայերենյան հոլովման համակարգերի առանձնահատկությունները և դրանց արտացոլումը «Պատմութիւն Հայոց» երկում»**, անդրադառնում է գրաբարյան և միջինհայերենյան հոլովման համակարգերի յուրահատկություններին և դրանց արտացոլմանը՝ «Պատմութիւն Հայոց» երկում:

13-րդ դարի պատմիչի երկում տարբեր հոլովներով գործածված բառաձևերը հիմնականում կազմված են հին հայերենի հոլովման համակարգի առանձնահատկությունների համաձայն: Գանձակեցու երկում վկայված գործիական հոլովի՝ **-ու** վերջավորությամբ բառաձևերը պատկանում են հոլովման գրաբարյան տիպերին: Այլ հոլովումների պատկանող բառերի՝ **-ով** վերջավորությամբ բառաձևեր ուսումնասիրվող երկում արձանագրված չեն:

Զգալի են հոլովական գուգաձևերը. հաճախ նույն նախադասության մեջ կարող են գործածվել նույն բառի՝ տարբեր հոլովիչներով ձևերը: Օրինակ՝ նույն նախադասության մեջ առկա է **Ո** հոլովման մեկ բառի՝ ներգոյական հոլովի իմաստն արտահայտող երկու բառաձև: «Սա լուաւ, թէ գտուրբն Եղիշէ ընկեցին **ի գուրն**, հրամայեաց հանել զամենայն ոսկերսն՝ որ **ի գրի** անդ...» (193):

Գրաբարի անկանոն հոլովման **քոյր** գոյականը գրաբարում ուներ սեռական հոլովի երկու ձև՝ **քուեր** և **քեռ**, սակայն առավել գործածական էր վերջինը⁵:

⁵ Տե՛ս Աբաջյան Ա., Դիլբարյան Լ., Յուզբաջյան Ա., Դայոց Լեզվի պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 2017, էջ 309:

Երկում **քուեր** և **քեռ** ձևերը գործածվում են ոչ միայն առանձին, այլև որպես բարդության բաղադրիչ, օրինակ՝ **քուերորդայ (287)**, **հօրաքեռորդին (316)**:

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ **«Հայերենի թվակազմ ձևային գործածությունը «Պատմություն Հայոց» երկում»**, ներկայացված է հայերենի թվակազմ ձևային գործածությունը: Ուսումնասիրվող երկում վկայված օրինակները հիմնականում կազմված են թվակազմության գրաբարյան օրինաչափություններով:

Պատմիչի երկում վկայված է մի բառաձև, որում բացառական հոլովի իմաստն արտահայտված է **ի** նախդրի կրկնակի գործածությամբ՝ **ի յուկերաց (194)**: Այս երևույթը կարելի է համարել **ի** մասնիկի հնչյունափոխված տարբերակի իբրև նախդրի այլևս չգիտակցում: Հենց դրա համար էլ բացառական հոլով կազմելու համար առկա է կրկնակի նախդրավորում, այսինքն՝ **յ-ն՝ որպես ի** նախդրի հնչյունափոխված տարբերակ, կորցրել էր իր իմաստային դրսևորումը, և **ի-ն** է դիտարկվում իբրև նախդիր:

Երկրորդ գլխի երրորդ ենթագլուխը՝ **«Ածականի, թվականի և դերանվան գործածությունները Կ. Գանձակեցու «Պատմություն Հայոց» երկում»**, վերաբերում է ածականի, թվականի և դերանվան գործածությանը:

Սույն գլխի վերջին՝ չորրորդ գլուխը՝ **«Բայի անդեմ և դիմավոր ձևերը «Պատմություն Հայոց» երկում»**, բաղկացած է երկու ենթաբաժնից, որոնցում համապատասխանաբար ներկայացված է բայի անդեմ ու դիմավոր ձևերի գործածությունը:

Միջին հայերենը պահպանել է գրաբարի անորոշ դերբայը նույն վերջավորություններով: Սակայն միջին հայերենում միտում կար գրաբարյան **ի լծորդության** բայերն արտահայտել **-իլ** վերջավորությամբ: Այդ միտումը նկատվում է նաև Կ. Գանձակեցու «Պատմություն Հայոց» երկում: Այստեղ վկայված են **-իլ** վերջավորությամբ անորոշ դերբայի բազմաթիվ օրինակներ: Այսպես՝ **ողողանիլ (59)**, **սրբիլ (59)**, **կեղծաորիլ (351)**, **անկանիլ (355)**, **լինիլ (319)** և այլն:

Կարևոր է նշել, որ ներկայացված օրինակներում **ողողանիլ** և **սրբիլ** բայերը գործածված են միննույն նախադասության մեջ և արտահայտում են ոչ թե ներգործական, այլ կրավորական սեռի իմաստ: Հենց դրա համար էլ դրանք տարբերվում են **ողողանել**, **սրբել** ձևերից: Ներկայացնենք այդ նախադասությունը: «Հանապազ գործել զչարիս եւ ջրով լոկով **ողողանիլ** եւ **սրբիլ**» (59):

Չնայած դրան՝ միջին հայերենում չհստակեցվեց **ի լծորդության** բայերի՝ **ի** խոնարհիչով հանդես գալը: Լեզվի որակական զարգացման այս փուլում նշված բայերը զուգահեռաբար հանդես են գալիս **-իլ** և **-ել** մասնիկներով: Գանձակեցու երկում գործածվում են նույն բայի զուգաձևերը՝ **-իլ** և **-ել** վերջավորություններով տարբերակները: Օրինակներ՝ **ապստամբիլ (265)** // **ապստամբել (23)**, **հանդիպիլ (256)** // **հանդիպել (338)**, **մեռանիլ (232)** // **մեռանել (356)**, **նստիլ (94)** // **նստել (256)**:

Ատենախոսության երրորդ գլուխը՝ **«Պատմություն Հայոց» երկի շարահյուսական առանձնահատկությունները**, բաղկացած է երեք ենթագլխից: Այս գլխի առաջին ենթագլխում՝ **«Նախադասությունների կապակցությունը. նախա-**

դասության անդամների համաձայնությունը, շարադասությունը», քննության են առնված պատմիչի երկի՝ վերը նշված թեմային առնչվող օրինակները:

13-րդ դարի պատմիչն իր երկում գործածել է ածական և թվական որոշիչներ՝ թե՛ նախադաս, թե՛ հետադաս շարադասությամբ, ինչպես՝ մեծագոր և քաջ արքային (6), պայծառ պատմութեամբ (6), ի վեցն յունվարի (38), առաջին պտղոյն (127), ի յերկրորդ գալստեանն (129), ի հինգ տօնէն (130), արագաթև նաւովն (160), փափուկ մարմինք (259), ի պատուական մարմնոյ (259), ի Կոստանդիանոսէ մեծէ (5), յաւուր միում (19), վարդապետք անուանիք եւ իմաստունք (111), ամի միոյ (116), ձկունք ազնիւք (117), զօրօք բազմօք (180), աղետք տրտմագինք (239), ձիոց պղծոց (259), հանդերձս մեծագինս (269):

Օրինակներից պարզ երևում է, որ նախադաս կիրառությամբ կառույցներում առկա չէ համաձայնություն, իսկ հետադաս որոշիչները հոլովով ու թվով համաձայնում են որոշյալին:

Պատմիչի երկում վկայված են նաև նախադաս որոշչի սակավաթիվ օրինակներ, որոնցում միավանկ ածական որոշիչը համաձայնում է որոշյալին, ինչպես՝ **սրբոյն Գրիգորի (18), մեծաւ պատուով (29):** Արձանագրված են նաև միավանկ ածական որոշիչների օրինակներ, որոնցում առկա չէ համաձայնություն, ինչպես՝ **չար գործույք (17), սուրբ քահանայապետին (18), սուրբ հարք (22)** և այլն:

Մեծ թիվ են կազմում նաև այն օրինակները, որոնցում **մի** բառը գործածվում է որպես նախադաս ու հետադաս որոշիչ և երկու դեպքում էլ հոլովով համաձայնում է, ինչպես՝ **յաւուր միում (114), ի միում աւուր (130):** Կարևոր է նշել, որ առաջին օրինակում **մի** բառի հետադաս կիրառությունը անորոշ դերանվան իմաստային դրսևորում ունի, իսկ երկրորդ օրինակում՝ թվականի:

Սույն գլխի երկրորդ ենթագլուխը՝ **«Անդեն նախադասությունները և նրանց տեսակները «Պատմութիւն Հայոց» երկում»,** անդրադառնում է անվանական և բայական անդեն նախադասություններին, դրանց կառուցվածքային տեսակներին:

Երրորդ գլխի երրորդ ենթագլուխում՝ **«Բարդ նախադասություններ, նրանց տեսակները»,** քննության են առնված պատմիչի երկում վկայված բարդ նախադասությունները:

Ատենախոսության չորրորդ գլուխը՝ **«Պատմութիւն Հայոց» երկի ոճական առանձնահատկությունները»,** վերաբերում է պատկերավորման համակարգի այն առանձնահատուկ միջոցներին, որոնք կիրառել է 13-րդ դարի պատմիչը, և որոնց շնորհիվ պատմագրական այս երկը ձեռք է բերել նաև գեղարվեստական լուրջ արժեք:

Գանձակեցին իր երկում հմտորեն օգտվել է պատկերավորման համակարգի հարուստ զինանոցից ստեղծելով մեկը մյուսից հետաքրքիր ու յուրօրինակ պատկերներ: Աչքի են ընկնում ոճական տարբեր նպատակներով գործածվող մի շարք **մակդիրներ**, ինչպես՝ **ամենաարքունի** աստուածածին (332), այր **սրբասնունդ** (392), **աստուածընկալ** սրբութիւն (298), գազան **մարդախանձ** (92),

եռափափագ կարօտ (296), հոգի մահակուլ (336), հոգեշահ բանք (348), մեղսաբեր սուտ (302), մտահարուստն Յովհաննէս (113), քաղցր շնչումն (347) և այլն:

Քիչ չեն նաև բազմաբաղադրիչ մակդրավոր կառույցները, ինչպիսիք են՝ **ան-մեկնելի խոհականագոյն** գետ **արփիաբաշխ** (332), **լուսապարզեւ ասպնջական** ծով (342), **խորային խօսից պարզ** մեկնիչք (27), ոգին **մեղսասէր եւ պիղծ** (329), **քաղցր եւ ախորժ** բան (347) և այլն:

Գանձակեցու երկում առանձնահատուկ տեղ է գրավում **համեմատությունը**: Գիտենք, որ այն կատարվում է առարկաների, երևույթների միջև եղած ընդհանրության որևէ եզրի հիման վրա, սակայն էդ. Ջրբաշյանի բնորոշմամբ՝ պատկերավորման այս միջոցը բացահայտում է նաև հեղինակի վերաբերմունքը, նրա զգացմունքային գնահատականը, որն էլ սովորաբար ընդգծում է երևույթի բազմազան հատկություններից մեկը, տվյալ դեպքում՝ ամենից էականը⁶:

Թ. Շահվերդյանն իր «Դասական գրաբարի շարահյուսական ոճաբանություն» արժեքավոր աշխատության մեջ գրաբարի արտահայտչական համակարգում առանձնացնում է համեմատության երեք աստիճան՝ նույնական, բաղդատական և գերադրական⁷: Նույնական համեմատության գործառնությունը կիրառվել են շարահյուսական **«որպէս...նոյնպէս»**, **«որպէս...այսպէս»** կաղապարները: Գանձակեցու երկում առավելապես վկայված են օրինակներ, որոնցում հարաբերյալը գեղչված է, համեմատության մեջ գործածված են միայն **«որպէս»**, **«իբրև»** նախադրությունները: Բերենք համապատասխան օրինակներ:

«... զուգակշիռն ոսկոյ էւ արծաթոյ էւ ականց պատուականաց, **իբրև** գաղբ անպիտան էւ ընկեցիկ էւ արհամարիք էւ անծանօթք եղեն» (102), «... հանդէպ սրտին ծակ, **որպէս** թէ խոցած աշտեի» (322), «... քանզի բղխէ ի հօրէ **իբր** յակնէ անհատաբար, դադարէ յաղբեր» (332), «... որ զիտէ ճանաչել զօտարսն էւ զընտանիսն, **որպէս** զգիտնականս» (338):

Համեմատություններ ստեղծելիս Գանձակեցին օգտվում է նաև գրաբարի համար սովորական **«ըստ»** նախդրով կապակցվող շարահյուսական կաղապարներից, ինչպես՝ «Եկն ի տաճարն քառանօրեայ **ըստ օրինացն** յընծայումն» (125), «... **ըստ օրինակի** նահապետին Աբրահամու...» (344), «... այլ բուսանի ի տեղին **ըստ նմանութեան** եղջերաց» (371), «... ունին էւ փիլոն դեղին **ըստ նմանութեան** քրիստոնեից» (372), «Եւ նոցա կարգ առեալ **ըստ օրինակի»** (382):

Գանձակեցու երկում վկայված նույնական համեմատության մեկ այլ դրսևորում է **-ա/պէս, -ա/բար** վերջածանցներով ձևավորված պատկերը: Նշված վերջածանցները կցվում են բառարմատին հստակ մատնանշելով համեմատության մյուս եզրը հանդիսացող օբյեկտը և այն հատկանիշը, որի հիման վրա կատարվում է համեմատությունը⁸: Բերենք նաև այդպիսի օրինակներ: «... ի մի բնութիւն փառաւորեալ՝ գործելով **աստուածաբար** էւ **մարդկապէս**» (366), «Եւ ետ

⁶ Տե՛ս էդ. Ջրբաշյան, Գրականության տեսություն և եր., 1967, էջ 218:

⁷ Տե՛ս Թ. Շահվերդյան, Դասական գրաբարի շարահյուսական ոճաբանություն և եր., 2007, էջ 186:

⁸ Տե՛ս Նշվ. աշխ., էջ 206:

նմա գիր իշխանութեան ... տիրել **սեփականաբար**» (373), «Եւ տալ հրաման տիրաբար» (374), «... կոտորէին **անողորմաբար**» (382), «... **հզօրապէս** մարտնչէին եւ **զօրեղապէս** կռուէին» (385):

Պատմիչի երկում վկայված է նաև **նման** և **հանգոյն** բառերով ձևավորված համեմատության մեկական օրինակ: «Ձի **նման** էր այրն աստուծոյ» (345), «Պետրոսի **հանգոյն** գտերն որդի աստուծոյ դաւանեալ և գլուխ եկեղեցոյ լեալ» (346):

Կ. Գանձակեցին իր երկում բաղդատական համեմատության գեղեցիկ օրինակներ է կերտել **քան** նախադրության օգնությամբ: «... եւ շորիք սպիտակ եւ սեւա գունով եւ մեծ **քան** զձի, եւ **քան** զէջ» (368), «Եւ տառապէին մարդ եւ անասուն ի խիստ եւ ի դառն վերակացուացն, որ դառնագոյնք էին **քան** զփարատնին ի վերայ որդուցն Իսրայելի» (397):

Գանձակեցու երկում վկայված են գերադրական համեմատությունների՝ շարահյուսական կաղապարներով օրինակներ. «սա էր ի Մաքենցաց վանիցն՝ ծերացեալ **յոյժ**» (75), «Ապա եղև շարժ **սաստիկ**, որ զբազում տեղիս կործանեաց, ընդ որս խախտեցաւ եւ եկեղեցին Գետկայ **սաստիկ յոյժ**» (210), «...**կարի** խնդութեամբ ընկալաւ զնոսա թագաւորն եւ նշանակեցաւ ձեզ ի տեսլեանն» (353):

Պատմիչի երկում առանձնահատուկ տեղ ունեն նաև **փոխաբերությունները**, որոնք ուրույն հմայք են տալիս խոսքին: Բերենք մի քանի օրինակ՝ «Ժամանեցին նմա արդար դատաստանքն աստուծոյ» (314), «Առաքեաց աստուած զհօգի որդոյ իւրոյ ի սիրտս մեր» (330), «...գղձոյս ասերէր հոգւովն և զմահ սպանանէր» (336), «Եւ մատամբն աստուծոյ հանեմ զղեւս» (341), «Հայր արմատ, որդին բոյս...» (341):

Ուշագրավ են նաև պատմիչի երկում գործածված մի քանի շրջատյութերը՝ **երկնատր թագաւորութիւն – դրախտ (114), երկնային թագաւոր (73)-աստուած(225):**

Գանձակեցին իր երկում կիրառել է նաև **հակադրություն** ոճական հնարք: Վերջինս բառային մակարդակում արտահայտվում է հականիշ բառերի կիրառությամբ: «Ո՛չ **մեծութիւն** եւ ո՛չ **փոքրկութիւն**, ո՛չ **բարձրութիւն** եւ ո՛չ **խոնարհութիւն**, ո՛չ **առաւելութիւն** եւ ո՛չ **նուազութիւն**, այլ մի կարգ, մի պաշտօն, մի երկրպագութիւն համագոյ սուրբ երրորդութեանն դաւանի» (123), «... վասն զի ոմն **երկնային** է եւ ոմն **երկրային**, ոմն **երկելի** եւ ոմն **աներեւոյթ**, ոմն **ժամանակեայ** եւ ոմն **անմահ...**» (134), «Թողաք զամենայն գոյս մեր **զշարժուն** եւ **զանշարժուն**, եւ եկաք յԵրուսաղէմ» (353), «եւ զի այսք **հարկելիք** են, թէ եւ **անհարկելիք** թուին, եւ **անապուսելի՝ ապուսելիք...**» (339):

Ինչպես երևում է բերված օրինակներից, հակառակ իմաստ արտահայտող բառերը հիմնականում կապակցված են **«եւ»** համադասական շղկապով, որի շնորհիվ ավելի ցայտուն են դառնում տարբեր առարկաների միջև եղած հակա-

սությունները⁹: Բացի այդ՝ «եւ» շաղկապի գործածությամբ էլ ավելի է ընդգծվում պատկերի ոճական արտահայտչականությունը:

Գանձակեցին իր երկում օգտագործել է նաև «*մի*՝ արգելական մասնիկի կիրառությամբ կառույցներ: «*Մի*՝ մարմնական ծանօթութեամբն ի հոգեւոր վնասս **ընկղմեցին**» (46), «Եբարձ զամենեսեան, զի *մի*՝ դաւ ինչ **լիցին** թագաւորութեան նորա» (50), «... զի *մի*՝ ոճիրս ինչ **գործեցեն** այլազգիքն...» (174):

Բերված օրինակները վկայում են, որ այս կառույցով հրաման ու հորդոր է առաջադրվում այս կամ այն գործողությունը չկատարելու մասին, ապա հիմնավորվում դրան հակադրվող այլընտրանքային գործողության իրականացման անհրաժեշտությունը¹⁰:

Եզրակացության մեջ ամփոփվում են հետազոտության արդյունքները:

Ուսումնասիրելով 13–րդ դարի հայ պատմագրության նշանավոր ներկայացուցիչ Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Հայոց» երկը, վերջինիս բառապաշարի, բառակազմության, քերականական ու պատկերավորման համակարգերի առանձնահատկությունները՝ հանգել ենք հետևյալ եզրակացություններին:

1. Գանձակեցու երկի բառային կազմը հիմնականում գրաբարյան է, սակայն մինևոյն ժամանակ որոշ ընդհանրություններ ունի պատմիչի ապրած շրջանի լեզվական ատաղձի հետ:

Պատմիչի երկում վկայված են գրաբարից ավանդված բառեր, որոնց մեջ կան տարբեր լեզուներից կատարված փոխառություններ՝ իրանական (35 բառ -30, 43 %), հունական (11 բառ - 9,56 %), ասորական (5 բառ -4,34 %), եբրայական (2 բառ-1,73%), մոնղոլական (62 բառ -53,91%), որոնք հիմնականում վերաբերում են մշակութային, կրոնական կյանքին:

Գանձակեցու երկում վկայված, հետգրաբարյան շրջանում կատարված փոխառությունների գերակշիռ մասը՝ 62 բառ (74,69 %) մոնղոլական փոխառություններ են, որոնք, ընդգրկելով գործառական ընդարձակ ոլորտներ, գործածության լայն բնագավառներ, կազմում են իմաստային 9 խումբ: Կան նաև արաբական (10 բառ - 12, 04 %), պարսկական (8 բառ - 9, 63 %), թուրքական (3 բառ - 3, 61 %) փոխառություններ:

Ուսումնասիրվող երկում վկայված են միայն հումանշային երկանդամ շարքեր (48 շարք): Կան և՛ նույնարմատ (21 գույգ), և՛ տարարմատ (23 գույգ) հականիշների օրինակներ:

2. Գանձակեցու երկում այս կամ այն չափով տեղ են գտել բարդությունների բոլոր տեսակները: Մեծ թիվ են կազմում **հոդակապով** բարդությունները (221 բառ): **Անհոդակապ** բարդություններն անհամեմատ քիչ են (119 բառ): Առկա հարադրավոր բայերի մեծագույն մասը (137 բառ) **գոյական+բայ** կաղապարով կազմված հարադրություններն են: Վկայված են նաև **ածական+բայ** կաղապարով օրինակներ, բայց **գոյական+բայ** կաղապարի համեմատությամբ դրանք մեծ թիվ

⁹ Տե՛ս Թ. Շահվերդյան, նշվ. աշխ., էջ 228:

¹⁰ Տե՛ս նշվ. աշխ., էջ 234:

չեն կազմում (**24 բառ**): Կան նաև այլ խոսքի մասերով ձևավորված կաղապարներ: Երկուս գործածվել են նաև **կցական** բարդություններ (**76 բառ**):

Երկուս վկայված է **մեկ արմատ, մեկ ածանց** կաղապարով շուրջ **200** բառ, որոնց գերակշիռ մասը՝ **135 բառ (67, 5%)**, վերջածանցավոր բառեր են, իսկ **65 բառը (32, 5%)**՝ նախածանցավոր:

Կ. Գանձակեցու «Պատմություն Հայոց» երկում մեծ թիվ (**97 օրինակ**) են կազմում **արմատ+արմատ+վերջածանց** կաղապարով բաղադրությունները: Կենսունակ են նաև **նախածանց+արմատ+վերջածանց** կաղապարով կառույցները (**53 օրինակ**):

Պատմիչը առավելապես կիրառել է գրաբարի բառակազմական օրինաչափությունները՝ իր երկում ներկայացնելով բարդությունների բոլոր տեսակները, արմատների ու ածանցների ամենաբազմազան զուգորդություններով օրինակներ:

3. Երկում տարբեր հոլովներով գործածված բառաձևերը հիմնականում կազմված են գրաբարի հոլովման համակարգի առանձնահատկությունների համաձայն: Վկայված է ներգոյական հոլովի իմաստն արտահայտող մի քանի օրինակ հետևյալ կաղապարով՝ **ի նախդիր+հոգն. ուղղական**: «Եւ բնակեցաւ նա **ի վանքն**, որ կոչիր Գետիկ»(209): Ուշագրավ է այն, որ երկում վկայված է նաև նույն բառի՝ ներգոյական հոլովի իմաստն արտահայտող մեկ այլ կանոնական ձև, ինչպես՝ «Եւ բերեալ շինեաց մերձ **ի վանս** այլ գիւղ» (210):

Գրաբարյան հոլովական վերջավորությունների մեծագույն մասը պահպանվել է նաև միջին հայերենի շրջանում: Երկում չեն հանդիպում միջին հայերենի նորակազմ հոլովումները: Գերակշռում են արտաքին հոլովման ենթարկվող բառերը (**405 բառաձև**): Ներքին հոլովման բառաձևերի շարքն ընդգրկուն են դարձնում հիմնականում **-ութին** և **-ումն** վերջածանցներով բառերը (**104 բառաձև**):

Երկում կիրառված են նաև հոլովական զուգաձևություններ, ինչպես՝ **Խոսրովայ (17) // Խոսրովու (24), մահուան (79) // մահուն (79), Վրթանիսի (17) // Վրթանայ (17), քուեր (292) // քեռ (210)**:

4. Գանձակեցու երկում հոգնակիի կազմության հիմնական միջոցը գրաբարյան **-ք** մասնիկն է:

Չոգնակիակազմիչ այլ ձևություններից վկայված են միայն **-եսք** վերջավորությանը **հայեսք** (215) և **-եր** վերջավորությամբ **վանքերն** (99) բառաձևերը:

Հանդիպում են հոգնակիակազմության զուգաձևություններ, ինչպես՝ **վանքերն (99) // վանորայք (166)**:

5. Կ. Գանձակեցու երկում վկայված որոշ ածականներ պահպանել են համեմատության աստիճանների կազմության՝ գրաբարյան օրինաչափությունները, թեպետ կան դեպքեր, երբ **-գոյն** վերջածանցով կազմված ձևերը գերադրական աստիճանի իմաստ են արտահայտում՝ «Գրեցին թուղթս եւ առ մեծն Սահակ, տալով նմա եւս պատիւ **վեհագոյն**» (31):

6. Երկում կիրառված անդեն բայերի մեջ գերակշռում են գրաբարի բայական համակարգին բնորոշ ձևերն ու օրինաչափությունները:

Ներկա դերբայի **149** բառաձևից **39-ը (26%-ը)** կազմված են **-իչ** իսկ մյուսները՝ **-ող** վերջավորությամբ: Ուշագրավ է այն, որ Կ. Գանձակեցու «Պատմութիւն Հայոց» երկում վկայված են նույն բայի ներկա դերբայի ն՝ **-իչ**, ն՝ **-ող** վերջավորություններով ձևեր: **Այսպես**՝ ասողս (69), ասացողս (170), թարգմանիչք (26), թարգմանողք (27), սիրիչք (27), սիրողիղ (122):

Երկում կա **-ոց** վերջավորությամբ ապառնի դերբայի գործածության **7** և հարակատար դերբայի՝ օժանդակ բայի խոնարհված ձևի հետ գործածության միայն մեկ օրինակ «Կարի յոյժ **աջողած է** այրդ և շնորհաւոր» (265):

Կ. Գանձակեցու «Պատմութիւն Հայոց» երկում գործածված են **-ած** վերջավորությամբ հարակատար դերբայներ, որոնց գերակշիռ մասը կատարում է որոշչի պաշտոն:

7. Երկում վկայված **579** դիմավոր բայերի ճնշող մեծամասնությունը դրված է ներկա (**111 օրինակ**) և անցյալ կատարյալ (**114 օրինակ**) ժամանակաձևերով: Չեն զիջում նաև սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակաձևի (**114 օրինակ**) և հրամայական եղանակի (**90 օրինակ**) դրական խոնարհման ձևերը: Գանձակեցու երկում վկայված ստորադասական եղանակի **135** ձևերից գործածության հաճախակիությամբ զիջում են առաջին ապառնի ժամանակի բառաձևերը (**39 օրինակ**): Նշենք, որ գործածված դիմավոր բայի վերը նշված բոլոր ձևերը կազմված են բացառապես գրաբարի խոնարհման համակարգի օրինաչափություններով:

8. Պատմիչի երկում չնչին տարբերությամբ գերակշռում են **ենթակա+ստորոգյալ** կապակցությունները: Մեր քննած շուրջ 1400 օրինակներից **720-ում (54 %)** առկա է **ենթակա+ստորոգյալ** կառուցատիպը, իսկ մյուս օրինակներում ստորոգյալն է դրված ենթակայից առաջ:

837 որոշիչ-որոշյալ կապակցություններից **511-ում (61%)** որոշիչը հանդես է գալիս նախադաս, իսկ **326-ում (39%)**՝ հետադաս դիրքում: Ածականով, թվականով արտահայտված որոշիչները հիմնականում գործածված են նախադաս դա բնորոշ է միջին հայերենին: **Հատկացուցիչ-հատկացյալ** կապակցություններում (**534** կապակցություն) գերակշռում է հետադաս հատկացուցչի գործածությունը. **521** կապակցության մեջ (**97%**) հատկացուցիչը հանդես է գալիս հետադաս, **13-ում (3%)**՝ նախադաս դիրքում:

9. Կ. Գանձակեցու «Պատմութիւն Հայոց» երկում շատ մեծ թիվ են կազմում դերբայական նախադասությունները: Պատմիչի երկում վկայված կախյալ դերբայական կապակցություններում գերակշռում են անցյալ դերբայով կառույցները (**70 %**), որոնց մեծագույն մասը կատարում է ժամանակի և ձևի պարագաների պաշտոններ:

10. Պատմիչի երկում վկայված են բարդ նախադասության՝ գրաբարին բնորոշ կառույցներ. բարդ համադասական նախադասության բաղադրիչները կապակցված են հիմնականում **«և»** շաղկապով, քիչ են անշաղկապ կապակցու-

թյունները, իսկ ստորադասական նախադասության բաղադրիչ նախադասությունները՝ ստորադասական շաղկապներով, հարաբերական դերանուններով: Պատմիչի երկի նախադասությունների շուրջ **70 %-ն** սկսվում է «**եւ**» շաղկապով:

11. Գանձակեցին հմտորեն օգտվել է պատկերավորման համակարգի հարուստ զինանոցից՝ ստեղծելով մեկը մյուսից հետաքրքիր ու յուրօրինակ պատկերներ: Երկում վկայված է շուրջ **200 մակդիր**, որոնք ունեն կիրառական ինքնատիպ դրսևորումներ, **փոխաբերություններ, հակադրություններ, համեմատություններ**՝ երեք աստիճաններով՝ **նույնական, բաղդատական** և **գերադրական**, որոնք բոլորն էլ կազմված են գրաբարյան պատկերավորման համակարգի առանձնահատկություններով:

12. Գանձակեցին օգտագործել է նաև «**մի՛**» արգելական մասնիկը (**37 ձև**). դրանով հրաման ու հորդոր է առաջադրվում այս կամ այն գործողությունը չկատարելու մասին, ապա հիմնավորվում դրան հակադրվող այլընտրանքային գործողության իրականացման անհրաժեշտությունը:

Կ. Գանձակեցու «Պատմութիւն Հայոց» երկը ինքնատիպ մի աշխատանք է և, ինչպես պատմիչն ինքն է ասել, իր անունն անմահացնող «կենդանի արձան գերեզմանի»: Իսկապես, սա պատմական կենդանի մի հուշարձան է, մոնղոլների արշավանքի մասին պատմող ամենահավաստի ու ընդարձակ սկզբնաղբյուր, ինչպես նաև ժամանակի պատմագեղարվեստական արձակի փայլուն նմուշ:

Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. Գեղարվեստական պատկերավորման համակարգի առանձնահատկությունները Կ. Գանձակեցու «Պատմութիւն Հայոց» երկում/ Հայաստանի անկախության 20-ամյակին նվիրված երիտասարդ լեզվաբանների հանրապետական գիտաժողովի զեկուցումներ, Երևան, 2011, էջ 38-43:
2. Մոնղոլերեն փոխառությունները Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Հայոց» երկում/ «Հանդես» գիտամեթոդական հոդվածների ժողովածու, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ, №14, Երևան, 2013, էջ 225-231:
3. Բայի անդեմ ձևերի գործածությունը Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն հայոց» երկում/«Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու, №1 (54), «Աստղիկ» հրատ., Երևան, 2013, էջ 115-122:
4. Գրաբարի և միջին հայերենի հոլովման համակարգերի առանձնահատկությունների դրսևորումը Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Հայոց» երկում/ Հայագիտության հարցեր, №3 (21), ԵՊՀ հրատ., Երևան, 2020, էջ 205-215:
5. Compounding in the work “Armenian History” by Kirakos Gandzaketsi/ Katchar Scientific Periodical, 1, Yerevan, 2021, pp. 122-132.
6. Նախադասության անդամների համաձայնությունը և նրա արտահայտությունը Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Հայոց» երկում/ Պատմություն և մշակույթ, № 1, ԵՊՀ հրատ., 2021, էջ 199-205:

Акобян Лилит Размиковна
Язык произведения "История Армении" Киракоса Гандзакеци

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.02.01 – “Армянский язык”.

Защита состоится 12 сентября 2022 года в 15.00 ч. на заседании специализированного совета ВАК по лингвистике 019 при Институте языка им. Р. Ачаряна Национальной академии наук РА по адресу: 0015, Ереван, ул. Григора Лусаворича 15.

Резюме

С точки зрения обобщения культурной панорамы каждой нации крайне необходимо выявление, всестороннее изучение и правильная оценка ценностей прошлого, что актуально и в науке. В плане комплексного изучения средневековых историографических произведений первостепенное значение приобретает лингвистический анализ.

В армянской средневековой историографической прозе важное место занимает историк, церковный и общественный деятель XIII века Киракос Гандзакеци. Благодаря активной деятельности вардапет Киракос Гандзакеци был хорошо известен и пользовался уважением в Армении и во многих вопросах играл важную роль. Его летописная заслуга состоит преимущественно из крупного историографического произведения "История Армении", в котором историк представляет глубокие, разносторонние знания.

Настоящая диссертация посвящена лингвистическому изучению вышеупомянутой работы. Лингвистические исследования произведения этого автора, жившего в период функционирования среднеармянского языка, но созданного на грабаре, способствуют более полному научному описанию древнеармянского языка в XIII веке.

Диссертация состоит из введения, четырех глав с соответствующими параграфами, заключения, списка использованной литературы. Объем диссертации - 133 страниц.

В первые два десятилетия XXI-го века чрезвычайно важное значение приобрели разработка и развитие армянского языка, особенно его терминологии, на исконно армянской основе. Для решения этого вопроса возникает необходимость чаще прибегать к предыдущим этапам развития армянского языка. Именно поэтому переданные грабаром письменные памятники становятся предметом серьезного и всестороннего изучения. Этим обусловлена и **актуальность** данного исследования.

Полное изучение лексики произведения К.Гандзакеци подчеркивается и другим обстоятельством. В произведении историка насчитывается около 6

десятков монгольских заимствований, которые уже исчезли в языке-источнике. Фактически благодаря произведению К. Гандзакеци эти слова были спасены от необратимой утраты и могут быть восстановлены и в современном монгольском языке. **Актуальность** темы данной диссертации обусловлена также изучением этого лексического пласта.

Цель данной диссертации - показать лингвистико-филологическую ценность объемного произведения историка XIII века К. Гандзакеци «История Армении», в особенности достоверного источника периода татаро-монгольского владычества в Армении. Будучи написанным в XIII веке, в период функционирования среднеармянского языка, произведение в основном представляет особенности словообразовательной, грамматической систем габара, анализ которых является основной задачей представленной работы. Иными словами, целью данной диссертации является всестороннее изучение произведения К. Гандзакеци, акцентируя внимание на следующих задачах:

1. выделить те слои лексики, которые засвидетельствованы в произведении (исконно армянские слова, заимствования);
2. зафиксировать лексические и грамматические реалии, являющиеся отклонениями от известных критериев и форм классического армянского языка;
3. рассмотреть факты, показывающие тенденции дальнейших изменений;
4. представить лексические и грамматические сочетания;
5. представить особенности образной системы.

Фактическим материалом исследования является литературное наследие историка XIII века Киракоса Гандзакеци - произведение "История Армении". Использованы почти все публикации, содержащие информацию о языке и стиле произведения Гандзакеци.

Для решения вышеуказанных задач были применены описательно-аналитический, синхронные и диахронные методы.

Научная новизна данной диссертации заключается в том, что это исследование является первой попыткой полного, многоуровневого изучения «Истории Армении» историка XIII века Киракоса Гандзакеци. Всесторонне изучили лексические, морфологические и синтаксические особенности вышеупомянутого произведения и фиксировано, что в XIII веке, в период функционирования среднеармянского языка, создается произведение, в котором среди всех форм языковых уровней доминирует габар.

Изучение и выявление языковых фактов "Истории Армении" Киракоса Гандзакеци, яркого представителя армянской историографии XIII века, может иметь как теоретическое, так и практическое значение для арменоведения. Приведенный в данной диссертации материал может быть полезен тем, кто занимается вопросами истории, словообразования, лексики, грамматики армянского языка.

Lilit Hakobyan

Language of the Work "Armenian History" by Kirakos Gandzaketsi

Dissertation for the degree of Candidate of Philological Sciences on the specialty 10.02.01 “The Armenian Language”

The defense will be held on 12 September, 2022 at 15.00, at the session of the Specialized Council on Linguistics 019 SCC RA in the Institute of Language after H. Acharyan of National Academy of Sciences of RA (address: Yerevan, 0015, Grigor Lusavorich st.15).

Summary

From the point of view of shaping the cultural context of each nation, it is necessary to identify the values of the past, to study them comprehensively and to evaluate them properly. This is also relevant in science. Linguistic analysis is widely used in the complex study of medieval historiographical works.

Kirakos Gandzaketsi, a 13th century historian, clergyman and public figure, has a valuable place in Armenian medieval historiographical prose. Due to his active work, Archimandrite Kirakos Gandzaketsi was well known and enjoyed respect in Armenia, playing a significant role in many issues. His bibliographic work is composed mainly of a large historical work, the literary work "Armenian History", in which the historian presents deep, comprehensive knowledge.

The present dissertation is dedicated to the linguistic examination of the above-mentioned work. Linguistic studies of the author's work that lived during the period of The Middle Armenian language but wrote in Old Armenian, contribute to making the scientific description of Old Armenian even more comprehensive.

The dissertation consists of an introduction, four chapters with corresponding sub-chapters, a conclusion and bibliography. The volume of the dissertation is 133 pages.

The development of the Armenian language, particularly its terminology, on an Armenian basis has become highly essential in the first two decades of the twenty-first century. To remedy this difficulty, we should go to earlier phases of our language development more frequently. As a result, the written monuments passed down in Old Armenian became the focus of a proper research. This influences the **topicality** of this research.

The whole representation of K. Gandzaketsi's language is also employed in another context. According to the historian, approximately six dozen Mongolian borrowings have already disappeared in the borrowed language. In reality, due to K. Gandzaketsi's efforts, those words have been spared from loss and can now be restored in modern Mongolian. The research of that word layer influences the urgency of this dissertation's topic.

The **aim** of this dissertation is to show the 13th century historian K. Gandzaketsi's linguistic-philological value of comprehensive work "Armenian History", with its linguistic-philological importance, it does not weaken the historiographical component at all especially the fact that it is a reliable source of Tatar-Mongol rule in Armenia.

Written in the 13th century, during the period of the use of Middle Armenian, the work mostly focuses on the lexical and grammatical systems of Old Armenian, the analysis of which is the main task of the presented work. In other words, the purpose of this dissertation is to comprehensively examine the language of Gandzaketsi's work, with an emphasis on the following **objectives**:

1. separate the layers of vocabulary that are evidenced in the work (native Armenian words, borrowings);
2. to record the lexical-grammatical realities that deviate from the known standards and forms of classical Armenian;
3. consider the facts that show the trends of further changes;
4. introduce lexical and grammatical combinations;
5. introduce the features of the imaging system.

The factual material of this study is the literary heritage of the 13th century historian Kirakos Gandzaketsi's work "Armenian History". We have used almost all the publications containing information about the language and style of Gandzaketsi's work.

Several **methods** have been used to complete the above tasks. The work was mainly fulfilled by descriptive-analytical approach. At the same time, synchronic and diachronic methods of comparing facts were used.

Using the diachronic method, we have attempted to present the tendencies and directions of changes in some linguistic realities, as a result of the historical development of the language.

The **scientific novelty** of this dissertation is that it is the first attempt at a comprehensive, multi-layered examination of the work "Armenian History" by 13th century historian Kirakos Gandzaketsi. We widely researched the above-mentioned work's lexical, grammatical, and syntactic features.

The analysis and findings of the linguistic facts in Kirakos Gandzaketsi's "Armenian History," a famous representative of the 13th century Armenian history can have both **theoretical** and **practical significance** for Armenology. The information in this dissertation may be valuable to anyone interested in the history, word development, lexicon, and grammar of the Armenian language.